Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ ՛Կարողունակությունների ձևավորումը առարկայի դասավանդման մեջ՝

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Արմինե Խաչատրյան

Ն.Գետաշեն 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բովանդակություն_____2

2. Ներածություն_____2

3. Սովորողների մոտ ձևավորվող հիմնական կարողունակությունները_____3

4. Համագործակցային ուսուցման դերը կարողունակությունների ձևավորման գործում_____7

5.Կարողունակությունների ձևավորումն ու զարգացումը մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասերին_____9

6.Եզրակացություն_____17

7.Օգտագործված գրականություն_____17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է, ՝կարողունակություն՝ եզրույթը ժամանակակից մանկավարժության մեջ նորույթ է: Առաջներում դպրոցի խնդիրն էր սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ , կարողություններ և հմտություններ, իսկ այժմ դպրոցը պետք է սովորողներին զինի անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, նրանց մոտ ձևավորի կայուն արժեքային համակարգ և սովորեցնի նրանց՝ երևույթներին ,արժեքներին և ընդհանրապես ամեն ինչի վերաբերվել դատողաբար, ունենալ սեփական դիրքորոշում, ընդ որում՝ ուսուցիչը պետք է ապահովի սովորողների անձի ճիշտ ու ներդաշնակ զարգացումը, որպեսզի անձի դիրքորոշումները լինեն տեղին, ճիշտ և ամենակարևորը՝ չխախտեն ուրիշների իրավունքները: Այս չորս բաղադրիչներից էլ հենց ձևավորվում է կարողունակությունը:

՝Կարողունակություն՝ տերմինի սահմանումը տրված է շատերի կողմից: Կարողունակությունը/միջազգային անվանումով՝ կոմպետենցիա/ սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքների, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի համագումարն է:

Ընտրվեց այս թեման, որովհետև այն համեմատաբար նոր է, քիչ ուսումնասիրված: Նոր չափորոշչում առանձնացված են ութ կարողունակություններ: Բնական է, որ ուսուցիչը հատուկ ուշադրություն պետք է դարձնի սովորողների կարողունակությունների զարգացման վրա, իսկ դա նշանակում է, որ նա առանձին տողով օրվա դասապլանում պետք է նշի, թե իր՝ այդ օրվա դասի ընթացքում սովորողների մոտ որ կարողունակությունն է հնարավոր զարգացնել:

Նոր չափորոշչով, ինչպես արդեն ասվեց, սահմանված են ութ կարողունակություններ: Այս աշխատանքում մանրամասնորեն կկատարվի անդրադարձ դրանց նկարագրությանը, սովորողների մոտ դրանց զարգացման եղանակներին ու հնարներին:

Աշխատանքը նպատակ ունի ուսումնասիրել կարողունակությունները, սովորողների մոտ դրանց զարգացման կոնկրետ ուղիները:

Այսպիսով՝ մեր խնդիրը հետևյալն է՝ ուսումնասիրել հնարավորինս շատ հոդվածներ, նյութեր՝ կապված սովորողների մոտ կարողունակությունների զարգացման խնդիրների հետ, այնուհետև տեղայնացնել դրանք, կիրառել դասարանում, չափել ու գնահատել արդյունքները և այդ աշխատանքը դարձնել շարունակական, այլ ոչ թե ավարտել՝ հետազոտական աշխատանքի ավարտելու հետ:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարբեր երկրների կրթակարգերում կարելի է հանդիպել առանցքային կարողունակությունների տարբեր մոդելների: Օրինակ որպես կարողունակություններ հաճախ ընդունվում են այնպիսի որակներ, ինչպիսիք են ինքնակազմակերպումը, նախաձեռնողականությունը, պատասխանատվությունը և այլն: Այս հարցում միասնական մոտեցումը բացակայում է, սակայն մի բան հստակ է՝ առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելն աստիճանաբար իր դիրքերը զիջում է առանցքային կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելին:

Մեկ անգամ ևս բերենք չափորոշչից վերցված կարողունակությունների սահմանումը: Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են:

ՀՀ-ում Ժամանակակից կրթական չափորոշիչը սահմանում է ութ կարողունակություն: Դրանք ներկայացված են ներքևում.

1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն
2. Սովորել սովորելու կարողունակություն
3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5. Թվային և մեդիա կարողունակություն
6. Մշակութային կարողունակություն
7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
8. Տնտեսական կարողունակություն

Որպեսզի ուսուցիչը կարողանա սովորողների մեջ զարգացնել անհրաժեշտ կարողունակությունները,նախևառաջ պետք է հասկանա, թե դրանցից յուրաքանչյուրը իրենից ինչ է ներկայացնում: Այդ իսկ պատճառով նախ համառոտ ներկայացնենք կարողունակությունները նկարագիրը:

1. **Լեզվական գրագիտություն և կարողունակություն-**Սա ենթադրում է, որ սովորողները պետք է գրավոր և բանավոր հաղորդակցվեն հայոց լեզվով, ինչպես նաև՝ այլ լեզուներով՝ ըստ իրավիճակների: Նրանք պետք է կիրառեն լեզուն՝ որպես շփման և հաղորդակցման միջոց: Լեզվական գրագիտությունը հիմք է, որի վրա կառուցվելու են մյուս առարկաներից տրվող գիտելիքները: Սովորողները միայն լեզվական բավարար գիտելիքներ ունենալու դեպքում ընդունակ կլինեն սովորել մյուս առարկաները, դրանք հասկանալ և կիրառել՝ ապահովելով դրանց ամրապնդումը:

2. **Սովորել սովորելու կարողունակություն-**Այս կարողունակությունը ենթադրում է, որ սովորողը և՛ ինքնուրույն, և՛ մյուսների հետ համատեղ կարողանալու է արդյունավետ սովորել: Նա պետք է կարողանա իր ուսումնառության պրոցեսը բավականին արդյունավետ կազմակերպել, ինքնուրույնություն դրսևորել, սովորել առանց ուսուցչի անմիջական վերահսկողության: Այս կարողունակությունը զարգացնելը շատ կարևոր է, որովհետև դպրոցը ավարտելուց հետո կյանք մտնելով մարդը չի դադարում սովորել, մշտապես նորին տիրապետելու, նորը վերցնելու, նոր գիտելիքներով զինվելու կարիք կլինի, հետևաբար վաղվա քաղաքացին , որ այսօրվա աշակերտն է, պետք է կարողանա կոմպետենտ լինել այնքան, որ կարողանա ինքնուրույն հասկանալ, թե ինչպես հայթայթի իրեն անհրաժեշտ ինֆորմացիան և հնարավորինս ճիշտ ընկալելով՝ տիրապետի դրան:

Ինչպես ասվում է հանրակրթության պետական չափորոշչում, սովորողները պետք է կարողանան ինքնակազմակերպվել, ձևավորել ժամանակի կառավարման հմտություն, նրանք պետք է կարողանան գնահատել սեփական և մյուսների հնարավորությունները, սովորեն աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու գործընթացի ընթացքում աշակերտները ձևավորում են ուսումնասիրելու, վերլուծելու, նոր մոտեցումներ կիրառելու ունակություններ, և զարգանում է նրանց համակարգային և ինտեգրված մտածողությունը:

3. **Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն-**Դպրոցահասակ երեխաները կյանքի այն փուլում են, որ դեռևս իրենք իրենց չեն ճանաչում, չունեն ձևավորված բնավորություն և արժեքային համակարգ :Բայց միևնույն ժամանակ դա այն փուլն է, երբ սովորողները ունեն ինքնաճանաչողության մեծ ձգտում, նրանք նույնիսկ անգիտակցաբար ակտիվորեն աշխատում են այդ ուղղությամբ, այս տարիներին է երեխաների մեջ ձևավորվում վստահությունը սեփական ուժերի և կյանքի հանդեպ, նրանք սովորում են ճիշտ տնօրինել ժամանակը, ինչպես նաև իրենց ունեցած տարբեր հնարավորությունները: Նրանք կարող են նաև մտածել ու մեծ ու փոքր քայլեր անել մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Դպրոցական տարիքում նաև սովորում են աստիճանաբար դրսևորել հարգանք, պատասխանատվություն սեփական արարքների համար: Ուսուցիչը պետք է լինի նրանց կողքին, հետևի, որ նրանք ճիշտ զարգանան, ճիշտ ինքնադրսևորվեն, որովհետև եթե շրջապատը այնքան էլ վստահելի չէ, շրջապատում կան կեղծ արժեքներ, ինքնաճանաչողության և սոցիալիզացման ճանապարհին երեխաները կարող են կատարել սխալ ընտրություն, իրականի տեղ ընդունել կեղծ արժեքները, իսկ հետո շատ դժվար կլինի նրանց այդ ճանապարհից հետ բերելը: Ճիշտ մոտեցման դեպքում երեխաները սոցիալական հարաբերություններություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների և աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչել դրանց տարբերությունները:

4. **Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն-**Սովորողների հետ այս կարողունակությունը զարգացնելու նպատակով պետք է աշխատել այնպես, որ նրանց մոտ ձևավորվեն ու զարգանան այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ժողովրդավարությունը, ազատությունը, բարեվարքությունը, սոցիալական արդարությունը և իրավական պետության գաղափարը: Նանց մոտ ճանաչողության միջոցով պետք է ձևավորել սեր հայրենիքի նկատմամբ, հարգանք Սահմանադրության ու նրա պահանջների նկատմամբ: Սովորողների գիտակցությունը աստիճանաբար պետք է հասցնել այն մակարդակի, որ նրանք կարևորեն մարդկային կյանքն ու

արժանապատվությունը, գիտակցեն ու կարևորեն սեփական քաղաքացիական պարտքը, սեփական մասնակցությունը ժողովրդավարության պրոցեսներին: Նրանք պետք է ճանաչեն հասարակության մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու կարողանան վերլուծել դրանք, կարողանան որոշումներ կայացնել և պատասխանատու լինել այդ որոշումների իրագործման համար:

5. **Թվային և մեդիա կարողունակություն-**Այս կարողունակության զարգացման արդյունքում սովորողները պետք է տիրապետեն մեդիագրագիտության կանոններին , պատկերացնեն մեդիայի աշխատանքը և դերը, փնտրեն, գտնեն և տարածեն հստակ աղբյուրներից եկող ճիշտ ինֆորմացիա, գնահատեն մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային համակարգի, դիրքորոշումների, գործողությունների վրա: Այս կարողունակության զարգացման արդյունքում սովորողները նաև պետք է տիրապետեն մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանան արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները դրական նպատակներով:

6. **Մշակութային կարողունակություն-**Այս կարողունակության զարգացման արդյունքում սովորողները պետք է ճանաչեն հայ մշակույթը, մասամբ նաև՝ համաշխարհային մշակույթը՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նաև կկարողանան զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու գրականության ու արվեստի միջոցով ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:

7. **Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն-**Սովորողներին առօրյա կյանքում շատ հաճախ է պետք գալիս մաթեմատիկական մտածողությունը: Շատ երևույթներ ճանաչելու և հասկանալու համար կարելի է օգտվել բանաձևերից, կորերից, աղյուսակներից, իսկ դա հենց մաթեմատիկական մտածողությունն է: Աշակերտները կկարողանան ընկալել և կիրառել վերացարկված և ընդհանրացված հասկացությունները և ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները:

8. **Տնտեսական կարողունակություն-**Աշակերտները այս կարողունակության զարգացման շրջանակներում կարողանում են վերլուծել և գնահատել մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները: Փորձում են նաև հասկանալ սեփական դերը տնտեսության զարգացման մեջ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Քանի որ մեր աշխատանքը հիմնականում կարողունակությունների զարգացման վերաբերյալ է, պետք է պատասխանենք այն հարցին, թե ինչպե՞ս պետք է զարգացնել սովորողների կարողունակությունները: Բնականաբար կան բազմաթիվ եղանակներ, ձևեր, մեթոդներ, բայց ընտրվել է դրանցից համագործակցային մեթոդը: Համագործակցային մեթոդի դեպքում սովորողները բաժանվում են խմբերի, աշխատանքները հանձնարարվում են ոչ թե առանձին անձանց, այլ ամբողջ խմբին: Շատ արդյունավետ են հատկապես համագործակցային մեթոդով աշխատանքի այն տեսակները, որոնց դեպքում կա նաև մրցակցություն խմբերի միջև: Խմբերի միջև մրցակցությունը ստիպում է 'մրցակից' թիմերին աշխատել ավելի արագ, աշխատանքը բաժանել բոլորի միջև, որպեսզի ժամանակի ավելորդ կորուստ չլինի, լինել առավել ուշադիր, սխալներ չանել, որպեսզի ակնկալվող միավորները լինեն ավելի բարձր, և հաղթանակը լինի իրենցը:

Անկախ դասապրոցեսի հետագա ընթացքից՝ դերերի բաշխումը և խմբային աշխատանքը արդեն ենթադրում են մի շարք հմտությունների ու կարողունակությունների զարգացում: Սովորողները ձեռք են բերում պատասխանատվությանզգացում, ինքնավստահություն, հանդուրժողականություն, ինքնուրույն սովորելու հմտություններ(սովորել սովորելու կարողունակություն), վերլուծական և քննադատական մտածողություն հանդես բերելու հմտություններ, լսելու և

դիտարկելու հմտություններ, ճկունություն և հարմարվողականություն, լեզվական, հաղորդակցական հմտություններ, համագործակցային հմտություններ, կոնֆլիկտների լուծման հմտություն, լեզվի և հաղորդակցության իմացություն և ֆենոմենալ ընկալում:

Ուսուցիչը համագործակցային մեթոդով աշխատելիս պետք է լինի ուշադիր, ճշգրիտ հաշվարկի նպատակներն ու ակնկալվող արդյունքները: Նախ հարկավոր է լավ տիրապետել դասագրքի թեմաներին՝ որոշելու համար, թե որ կարողունակությունը որ դասի բովանդակությանը կարելի է համապատասխանեցնել: Համագործակցային ուսուցման դեպքում կարելի է օգտվել բավականին շատ մեթոդներից: Այս դեպքում առաջադրանքը տրվում է խմբերին, հստակ բացատրվում է, որից հետո աշակերտները ձեռնամուխ են լինում դրա կատարմանը: Եթե համագործակցային աշխատանքի արդյունքները չափվելու ու գնահատվելու են մրցույթի ձևով, ապա պետք է հանձնարարել գրեթե միանման աշխատանք, որպեսզի հնարավոր լինի արդյունքների գնահատման հարցում պահպանել օբյեկտիվությունը: Այս դեպքում պետք է աշխատել նաև խմբերում ընդգրկել հավասար ուժերով մասնակիցների, որպեսզի նրանց արդյունքները ժամանակային և ինտելեկտուալ առումով շատ չտարբերվեն իրարից, իսկ եթե նպատակը ոչ թե մրցակցություն ստեղծելն է, այլ պարզապես սովորողների կողմից գիտելիքների տիրապետման և դրանք հմտությունների վերածելու պրոցեսի ապահովելն է, ապա կարելի է կիրառել շերտավորված ուսուցում՝ այն է՝ առաջադրանքները հանձնարարել ըստ սովորողների մտավոր կարողությունների, հետաքրքրությունների:

Համագործակցային ուսուցման դեպքում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝ ԳՈՒՍ, 'Կարուսել', 'Խճանկար', 'Երկու աստղիկ, մեկ ցանկություն', 'Ձնագնդի մեթոդ', 'Քառաբաժան':Ըստ ուսումնասիրվող թեմայի՝ այս մեթոդներով հնարավոր է զարգացնել սովորողների գրեթե բոլոր կարողունակությունները: Ավելորդ ենք համարում նկարագրել առանձին մեթոդները, որովհետև դրանց նկարագրությունը կարելի է գտնել բազմաթիվ ձեռնարկներում ու աշխատություններում: Փաստենք միայն, որ դրանք, ի թիվս այլոց, փորձարկվել են հեղինակի կողմից և առանձնացվել՝ որպես առավել արդյունավետ և հաճախ կիրառելի մեթոդներ:

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ, ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Գուցեև տողերիս հեղինակը բավականաչափ ծանոթ չէ մյուս առարկաներին ու կարողունակությունների զարգացման հետ կապված նրանց ընձեռած հնարավորություններին, բայց փաստ է այն, որ կարողունակությունների զարգացման հարցում հայոց լեզվի և գրականության դասաժամերը անհամեմատ մեծ հնարավորություններ են տալիս: Այս դասաժամերի ընթացքը հնարավորություն է տալիս սովորողների մոտ ձևավորել գրեթե բոլոր կարողունակությունները՝ իհարկե, առավել կամ պակաս չափով:

Կարողունակությունների զարգացման գործում իրենց անփոխարինելի դերն ունեն ժամանակակից փոխներգործուն մեթոդները: Դրանք նույն խմբային աշխատանքի մեթոդներն են: Աշխատելով խմբերով և համագործակցելով միմյանց հետ՝ սովորողները ունենում են մի շարք դրական ձեռքբերումներ: Խմբային աշխատանքի միջոցով զարգանում են նրանց մի շարք հատկանիշները, իսկ դա արդեն իսկ նշանակում է, որ նրանք ձեռք են բերում տարբեր կարողունակություններ: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, կարողունակությունները կարելի է ձևավորել ու զարգացնել ցանկացած դասաժամի ընթացքում ու ցանկացած մեթոդով աշխատելիս, բայց, որպեսզի մեր աշխատանքը լինի առավել համակարգված ու կառուցվածքային առումով ավելի հստակ, կաշխատենք ուսումնասիրել ու ցույց տալ, թե ինչպես կարելի է ձևավորել ու զարգացնել սովորողների կարողունակությունները ժամանակակից փոխներգործուն մեթոդների օգնությամբ:

Թե կոնկրետ ինչպես է տեղի ունենալու կարողունակությունների զարգացումը, ցույց կտրվի ստորև:

Լեզվական գրագիտություն և կարողունակություն	Այս կարողունակությունը կարելի է և հնարավոր է ձևավորել ու զարգացնել սովորողների մոտ հայոց լեզվի բոլոր դասաժամերի ընթացքում: Չկա հայոց լեզվի այնպիսի դասաժամ, որի ընթացքում չեն

	ֆինարկվում լեզվական հարցեր, խնդիրներ, լեզվի որևէ դասաժամ ինքնանպատակ չէ, ցանկացած դասաժամի ընթացքում սովորողները ձեռք են բերում գիտելիքներ , որոնք ամրապնդում են կրկնությունների միջոցով՝ վերածելով դրանք հմտությունների: Այնպես որ լեզվական գրագիտության կարողունակությունը սովորողների մոտ ձևավորվում է դեռևս առաջին դասարանից սկսած, երբ նրանք դեռ նոր սովորում են շատ հասկացությունների անվանումները կամ նախնական գաղափար են ստանում հնչյունի, տառի, վանկի, բառի վերաբերյալ: Այսպիսով հարկ չկա անհանգստանալ կամ հատուկ ջանքեր գործադրել, որ հայոց լեզվի դասաժամի ընթացքում ապահովվի լեզվական գրագիտության կարողունակությունը, դա ստացվելու է ինքնըստինքյան, սակայն, իհարկե, ուսուցիչը պետք է ջանա, որ լեզվի դասաժամերը անցնեն հետաքրքիր, որովհետև ուսուցման գործընթացը առավել արդյունավետ է հատկապես այն ժամանակ, երբ սովորողները դրան մասնակցում են հետաքրքրությամբ ու սիրով:

	Գրականության դասաժամերը ևս նպաստում են սովորողների մոտ լեզվական գրագիտության կարողունակության զարգացմանը, այստեղ արդեն հարկավոր է մի փոքր ավելի ուշադիր լինել: Խնդիրը այն է, որ գրականության դասաժամի նպատակները մի փոքր այլ են. այստեղ ուսուցիչը պետք է հասցնի նյութը բացատրել, վերլուծել, զարգացնել սովորողների քննադատական մտածողությունը, օգնել նրանց՝ հասկանալ գրական ստեղծագործության գաղափարն ու ասելիքը, նոր միայն անդրադառնալ նոր հանդիպած անհասկանալի բառերին, արտահայտություններին, բացատրել դրանք, կիրառել տալ՝ հանձնարարելով բազմապիսի խմբային ու անհատական աշխատանքներ: Վերջին հանձնարարությունները արդեն միտված են լեզվական գրագիտության և կարողունակությունների ձևավորմանը:
Սովորել սովորելու կարողունակություն	Քանի որ մեր խնդիրը նախևառաջ կարողունակությունների ձևավորումն է, ապա նոր միայն զարգացումը, սկսենք ամենասկզբից, երբ աշակերտը նոր մտնում է դպրոց: Նա գաղափար չունի սովորելու վերաբերյալ: Նրան հսկայական

	օգնություն է պետք, որը կսովորեցնի նրան սովորել: Սկզբում աշակերտները դիմում են ծնողների, ավագ քույր-եղբայրների օգնությանը, ովքեր շատ հաճախ նույնիսկ նրանց փոխարեն պայուսակն են հավաքում ամեն դասի պատրաստվելուց առաջ: Բայց ի սկզբանե պետք է հարցին շատ լուրջ մոտենալ , որովհետև, զրկելով երեխային ինքնուրույն գործելու անհրաժեշտությունից, նրան մղում են ծուլության, իսկ դա բարձր տարիքում կարող է ավարտվել ուսման հանդեպ հետաքրքրության կորստով: Երեխան դեռ առաջին դասարանից պետք է սովորի լինել ինքնուրույն, պատասխանատվություն կրել սեփական արարքների համար: Նա պետք է կարողանա կատարել իրեն հանձնարարված պարզ առաջադրանքները, կարողանա ինքնուրույն սովորել, ինքնուրույն հասնել արդյունքի: Որպեսզի երեխան սիրի սովորելը, ձգտի ինքնուրույնության ու չվախենա դժվարություններից, չպետք է նրան մենակ թողնել կամ մատնել անուշադրության. նա պետք է միշտ զգա, որ իր կողքին, իր թիկունքում կանգնած են խելացի ծնողներ ու վստահելի ուսուցիչներ, ովքեր վստահում են իրեն, իրենից մեծ

	նվաճումներ են սպասում և անշուշտ ուրախանալու են իր թեկուզև փոքր հաջողություններին համար: Այսպիսի մթնոլորտում մեծացող երեխան բնականաբար կսիրի սովորելը, չի դժվարանա ու դժգոհի, նրան մեծ հաճույք կպատճառեն դժվար առաջադրանքները ու դրանք հաղթահարելուն ուղղված ջանքերը: Ավելի մեծ տարիքում արդեն երեխաներին շատ ավելի հետաքրքիր է, երբ միասին են ձեռնամուխ լինում առաջադրանքի կատարմանը: Նրանք միմյանց սովորեցնելու բան ունեն, միաժամանակ նրանք սովորում են և՛ իրարից, և՛ դասագրքերից ու այլ անհրաժեշտ նյութերից: Որքան երեխաներին ավելի շատ հանձնարարվեն ինքնուրույն աշխատանքներ, այնքան նրանք ավելի արագ կգտնեն դրանք իրագործելու հնարներ, այսինքն աստիճանաբար նրանց մոտ կզարգանա սովորել սովորելու կարողունակությունը: Իսկ եթե հանձնարարվում է համագործակցային մեթոդով ինքնուրույն աշխատանք, այսինքն՝ աշխատանքը հանձնարարվում է խմբին, և ոչ թե անհատին, ապա սովորել սովորելու կարողունակությունը, անխոս, շատ արագ ձեռք է բերվում:

Ինքնահանաչողական և սոցիալական կարողունակություն	Կարևորագույն կարողունակություններից մեկն է: Ինքնահանաչողության խնդիրը երեխաները միշտ ունեն. սկզբում նրանք դա չեն գիտակցում, նրանց մոտ ինքնահանաչողությունը տեղի է ունենում ինքնաբերաբար, այնուհետև ժամանակի ընթացքում դեռահասների մոտ ինքնահանաչողության խնդիրը կարող է նույնիսկ շատ սրվել: Ինքնահանաչողության պրոցեսին պետք է հետևել, ճիշտ ուղղորդել սովորողներին, նրանց մղել դեպի իրենց մեջ եղած դրական, այլ ոչ թե բացասական գծերի վերհանումն ու կատարելագործումը: Գրականության դասաժամերին բազմաթիվ թեմաներ տալիս են այդ հնարավորությունը:
Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն	Այս կարողունակության ձևավորումն ու զարգացումը շատ կարևոր է ճիշտ քաղաքացի ձևավորելու համար: Քաղաքացիները պետք է արդյունավետ մասնակցություն ունենան ժողովրդավարական մշակույթում և այլոց հետ խաղաղ ապրեն մշակութապես բազմազան ժողովրդավարական հասարակություններում: Այս նպատակով պետք է ապագա քաղաքացիներին սովորեցնել գիտակցել և գործնականում կիրառել

	ժողովրդավարական սկզբունքները: Որպեսզի ժողովրդավարությունը և մարդու իրավունքները դառնան հասարակության առօրյա իրողություն, դրանք պետք է իրողություն դառնան դպրոցի առօրյայում: Դպրոցական տարբեր հարաբերություններում ժողովրդավարության սկզբունքները պետք է դառնան առաջնային ու կարևոր: Նկատի ունենք դրական և ապահով ուսումնական միջավայրի ձևավորումը: Դասաժամերի ընթացքում ևս պետք է ցուցաբերել ժողովրդավարության օրինակներ, ապահովել միջավայր, որտեղ ժողովրդավարության սկզբունքները կարելի է իրացնել, զգալ և անգամ հարցականի տակ դնել խաղաղ կերպով: Այս կարողունակության ձևավորման ու զարգացման նպատակով պետք է սովորողներին ընձեռել խնդիրներն ընկալելու այլընտրանքային եղանակների մասին իմանալու և դրանք բացահայտելու, խմբային և ինստիտուցիոնալ որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություններ: Նրանց համար կարելի է ստեղծել նաև իրենց իսկ ուսումնառությանը

	մասնակցելու հնարավորություն/համադասարանցիների գնահատում, սովորողների կողմից հարցերի առաջ քաշում/:
Թվային և մեդիա կարողունակություն	Այս կարողունակությունը շատ մեծ արդյունքներ է տալիս հատկապես գրականության դասաժամերին. սովորողները ուսուցչի հանձնարարությամբ կարողանում են կատարել փոքրիկ աշխատանքներ, կարողանում են, օրինակ, համացանցում փնտրել և գտնել գրողների կենսագրության հետ կապված հետաքրքիր նյութեր և ներկայացնել դասաժամի ընթացքում: Դասը դառնում է ավելի հագեցած ու հետաքրքիր: Կարողանում են նաև գրքույկներ պատրաստել տարբեր թեմաներով, կատարել այլ աշխատանքներ ևս:
Մշակութային կարողունակություն	Մշակութային կարողունակությունը ևս պետք է սկսել ձևավորել վաղ դպրոցական տարիքից, երբ երեխաները նոր են սկսում առնչվել մշակույթի տարբեր ժամանակների տարբեր ձևաքերումների հետ, իսկ այնուհետև գրականության դասաժամերի ընթացքում բնականաբար նրանք ուսումնասիրելու են մշակութային տարբեր արժեքներ՝ գրական

	ստեղծագործությունների տեսքով, ուսուցչին մնում է միայն ճիշտ մատուցել նյութը: Կարող ենք ասել, որ մշակութային կարողունակության ձևավորումն ու զարգացումը գրականության դասաժամերին ապահովված է, իսկ եթե ուսուցիչը կարողանում է ըստ անհրաժեշտության գրական նյութը կապել արվեստի այլ ճյուղերին պատկանող արժեքներին/երաժշտություն, նկարչություն/, արդեն շատ լավ է: Հատկապես կուզենայի նշել երաժշտությունը, որովհետև այսօր մեր հասարակության մի ստվար մասը երաժշտական վատ ճաշակ ունի, ինչում մեղքի իր բաժինն ունի նաև դպրոցը:
Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն-	Հայոց լեզվի և գրականության դասաժամերը այս դեպքում արդեն չեն կարող ընձեռել լայն հնարավորություններ, ուստիև չեմ կարծում, թե գրականության դասաժամերին պետք է ձգտել զարգացնել հենց այս կարողունակությունը, իսկ եթե պատահաբար առիթ լինի որևէ գիտատեխնիկական թեմա շոշափել/օրինակէ գիտական ոճի տեքստերի ուսումնասիրության հետ կապված/, ուսուցիչը պետք է ունենա գոնե որոշակի իմացություն, որպեսզի

	կարողանա բավարարել սովորողների հարցասիրությունը, նաև մտածի հիշյալ կարողունակության զարգացման մասին:
Տնտեսական կարողունակություն	Իհարկե կան առարկաներ, որոնց դասավանդման շրջանակներում ավելի հեշտ կլինի այս կարողունակությունը զարգացնելը, իսկ գրականության դասաժամերի հնարավորությունները այս առումով մեծ չեն: Ըստ անհրաժեշտության և թեմաների ընձեռած հնարավորությունների կարելի է ստեղծել կապ հայրենասիրության թեմայի հետ, այնուհետև խոսակցությունը հասցնել մինչև շրջակա միջավայրի պահպանումը, մաքրությունը՝ դա ներկայացնելով որպես հայրենասիրության փոքրիկ,բայց պարտադիր դրսևորում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտելով հետազոտական աշխատանքը՝ մեկ անգամ ևս փաստենք, որ ժամանակակից կրթության հիմքը կազմում են կարողունակությունները, որոնց վերաբերյալ կատարվեց աշխատանքը: Ընթացքում ուսումնասիրվեցին կարողունակությունները առանձին-առանձին, այնուհետև որոշվեց, որ կարողունակությունները հնարավոր է զարգացնել տարբեր մեթոդներով, բայց առավել հարմար է ինտերակտիվ մեթոդը, ուսումնասիրություն անցկացվեց, թե որ կարողունակությունը ինչպես կարելի է զարգացնել մայրենիի, հայոց լեզվի ու գրականության դասաժամերի ընթացքում, նկատեցինք, որ կան կարողունակություններ, որոնք նշված դասաժամերի ընթացքում կարող են ձևավորվել և զարգանալ անգամ առանց ավելորդ ջանքերի, բայց կան նաև նախատեսված կարողունակություններ, որոնց ձևավորումը կամ զարգացումը այդ դասաժամերի շրջանակներում գրեթե անհնար են: Աշխատանքը տվեց բավականին մեծ արդյունք, այն կարելի է կիրառել որպես կարողունակությունների ձևավորման ու զարգացման ուղեցույց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.«Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ժողովրդավարական մշակույթի համար»-Եվրոպայի խորհուրդ /կիրառական ուղեցույց/

2.Հանրակրթության պետական չափորոշիչ-ընդունման ամսաթիվը՝04.02.2021,ընդունող մարմինը՝ ՀՀ կառավարություն,ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 10.02.2021

3.«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը հանրակրթության նոր պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի դիտանկյունից-Յուրա Գանջալյան-https://dpir.am/hy/node/2554

ԴԱՍԱՊԼԱՆ

Ուսուցիչ՝ Արմինե Խաչատրյան

Առարկա՝	Հայոց լեզու	18.11.2022 թ.		Կիսամյակ	1-ին	Դասարան	7-րդ
Թեմա՝	Բացարձակ թվականներ, դրանց կազմությունը և ուղղագրությունը						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, տետր, թղթապաստառ						
Դասի նպատակը՝	1.Իմանալ քանակական թվականների տեսակները, կազմությունը, կիրառության ոլորտները: 2.Ուղղագրությունը և ուղղախոսությունը 3.Թվականի արտահայտած ընդհանուր իմաստը, ձևաբանական առանձնահատկությունները, շարահյուսական դերը						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	1.Կկարողանա թվականները արտահայտել բառերով, կիրառել խոսքում 2.Կազմել կապակցություններ թվական + գոյական կաղապարով 3.Որոշել թվականների շարահյուսական պաշտոնը նախադասության մեջ 4.Տեքստից դուրս գրել թվականները և կիրառել գրավոր խոսքում						
Կարողունակություն	Լեզվական գրագիտություն և կարողունակություն, սովորել սովորելու կարողունակություն						

Գործողություններ՝/ժամանակ, տևողություն/	Ուսումնական գործունեություն ներ աշակերտներ	Ուսումնական գործունեություն ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Դասի սկիզբ/5ր/ Նոր նյութի մատուցում /10ր/ Ուղղորդված աշխատանք /20ր/	Կարդալ տնային աշխատանքը, պատասխանել հարցերին Աշխատել խմբերով. Դուրս	Ընդհանուր հարցադրումներով անդրադարձ կատարել նախորդ թեմային, հակիրճ ներկայացնել նոր թեման, բացատրել թվականի կազմությունը և ուղղագրությունը:	1.Ի՞նչ է ցույց տալիս թվականը 2.Ի՞նչ ձևաբանական առանձնահատկություններ ուներ ունի թվականը: 3.Ի՞նչ հարցերի է պատասխանում:	Մտագրոհ Դասախոսություն ԳՈՒՍ

	են գրում թվականները: 1-ին խումբը դուրս է գրում պատմության դասագրքից,երկրորդ խումբը՝ աշխարհագրության դասագրքից: Այնուհետև թվականները պետք է արտահայտեն բառերով և գործածեն նախադասությունների մեջ: Հետո՝ որոշել դրանց շարահյուսական պաշտոնները և գրել թվական	Գրատախտակին գրել նախադասությունները և հանձնարարել աշակերտների՝ որոշել թվականի շարահյուսական պաշտոնը: Վերահսկել:		

	պարունակող երկու առած: Կիրառել ԳՈՒՍ մեթոդը:			
Ինքնուրույն աշխատանքներ /5ր/		Կիրառել ԳՈՒՍ մեթոդը:	Ի՞նչ գիտեինք: Ի՞նչ սովորեցինք: Ի՞նչը մնաց անհասկանալի: Ի՞նչ առաջարկներ ունենք:	

Տնային աշխատանք՝ 5բ	Տնային առաջադրանքի հանձնարարում-Թվականները գրել բառերով /316, 9, 11, 67/ , Դասագրքից 3-րդ վարժությունը:

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝

……

ԴԱՍԱՊԼԱՆ

Ուսուցիչ՝ Արմինե Խաչատրյան

Առարկա՝	Մայրենի	17.11.2022 թ.		Կիսամյակ	1-ին	Դասարան	5-րդ
Թեմա՝	Է. Միլիտոնյան՝Արդուկն ու մարդուկը՝:Դ-Տ-Թ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը:						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք,տետր,բառատետր,դարձվածքների բառարան,գրատախտակ:						
Դասի նպատակը՝	1.Ընկալել հեքիաթի բովանդակությունը: 2.Հարստացնել բառապաշարը: 3.Ընթերցել հիշյալ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը:						
Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	Կարողանալ արտահայտիչ ընթերցել, վերաշարադրել կարդացածը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը, տեքստից առանձնացնել նշված բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող բառերը, այդ արմատներով կազմել նոր բառեր:						
Կարողունակություններ	Լեզվական գրագիտության կարողունակություն, սովորել սովորելու կարողունակություն:						

Գործողություններ՝ /ժամանակ, տևողություն/	Ուսումնական գործունեություն աշակերտներ	Ուսումնական գործունեություն ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Դասի սկիզբ /5 ր/	Անցած դասի հարցում , ամփոփում, տնային աշխատանքի քննարկում:	Ստուգել տնային առաջադրանքները, հարցերով անդրադարձ կատարել նախորդ թեմային:	Որտե՞ղ էր ապրում սոխակը, ի՞նչ պատահեց նրան: Ինչպիսի՞ ուղղագրական կանոններ կան Գ-Կ-Ք բաղաձայն հնչյունների վերաբերյալ	Դասախոսություն Քառաբաժան
Նոր նյութի մատուցում /10ր/	Լսել:	Հակիրճ ներկայացնել նոր թեման, բացատրել նոր		

Ուղղորդված աշխատանք /20ր/	Կատարել հետևյալ աշխատանքները թեմայի շուրջ՝ տեքստից դուրս գրել դ-տ-թ բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ բառերը, լրացնել բառաբաժան աղյուսակը,տեքստից դուրս գրել դարձվածքները: *Վարդ, դադար, հարթ* արմատներով կազմել նոր բառեր, դրանցով՝ նախադասություններ:	թեմայի լեզվական նյութի հետ կապված ուղղագրական կանոնները: Վերահսկել, ուղղորդել, բացատրել՝ ինչ է դարձվածքը:	Ո՞ր դեպքում է լսվում թ,գրվում դ: Որո՞նք են փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցությունները:	

Ինքնուրույն աշխատանք /5ր/				
Դասի ամփոփում և տնային աշխատանք՝ 5ր	Տնային առաջադրանքի հանձնարարում-Հարցերով ամփոփել և հանձնարարել կատարել դասագրքի 79-րդ էջի 1-ին և 2-րդ վարժությունները:			

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝

……